ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

13.09.2021թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-21/12» ծածկագրով պետության կարիքների համար շենքերի մաքրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

«25» հունվարի 2022թ.

ք.Երևան

ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ ի դեմս ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Պատվիրատու») մի կողմից և «Ռիելթի Մենեջմենթ Քոմփանի» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Կ. Զաքարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող») մյուս կողմից (այսուհետև՝ «Կողմեր»), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածով և 13.09.2021թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-21/12» գնման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5 և 7.15 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին

1.1 Հաստատել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծառայության մատուցման նպատակով 2022 թվականի համար նախատեսված ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.2 Սահմանել, որ Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 03.01.2022թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև համաձայնագիր կնքելը կատարողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումը իրականացվում է այդ համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2. Այլ պայմաններ

2.1. 13.09.2021թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-21/12» ծածկագրով պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Ռիելթի Մենեջմենթ Քոմփանի» ՍՊԸ
ք. Երևան, Մ. Ադամյան 1	Ք. Երևան, Պ. Սևակ 8/1, բն. 10
ՀՎՀՀ՝ 02629081	Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 900011018539	Հ/Հ՝ 220300126673000
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 00228119
ՖՆ գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Վ. Հարությունյան	---------- Կ. Զաքարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված

13.09.2021թ. կնքված N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-21/12» ծածկագրով

պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով

« 25 » հունվարի 2022թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
Հ/Հ	գնումներ ի պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	90911110/503	շենքերի մաքրման ծառայություններ	4 750 000	4 750 000	4 750 000	9 500 000	9 500 000	9 500 000	14 250 000	14 250 000	14 250 000	19 000 000	19 000 000	19 000 000	19 000 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ՝ 900011018539
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղար՝

---------- Վ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռիելթի Մենեջմենթ Քոմփանի» ՍՊԸ
Ք. Երևան, Պ. Սևակ 8/1, բն. 10
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 220300126673000
ՀՎՀՀ՝ 00228119
Տնօրեն՝

---------- Կ. Զաքարյան
/ստորագրություն/
Կ.Տ